

# Ժողովուրդ

31  
(2881)

7 մարտի հինգշաբթի 2024  
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ԿՓՈՒՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԸ



Բոլոր փորձագետների կանխատեսմամբ՝ Հայաստանի գլխին կախված է պատերազմի վտանգը, եւ իշխանությունները, պատերազմին պատրաստվելու փոխարեն, առավել լուրջ գործով են զբաղված. պատրաստվում են փոխել ՀՀ զինված ուժերի ծառայողների համազգեստի ձևը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը Եվրոպայի, ավելի կոնկրետ՝ Ֆրանսիայի հետ ծավալվող եւ նոր զարգացող հարաբերությունների շրջանակում փորձում է, որպես ռազմական աջակցություն, փոխել հայոց բանակի զինծառայողների համազգեստը:

Պատճառն այն է, որ երկար ժամանակ է, ինչ ՊԲ համազգեստները չեն փոխվել, եւ դրանք դարձել են հեշտ հասանելի յուրաքանչյուրի համար:

Պաշտպանության բանակի համազգեստի փոփոխման համար ներդրվելու է ֆրանսիական մոդելը, որը, ըստ որոշ լուրերի, նման չի լինելու նախկին համազգեստին եւ՝ արտաքսնապես, եւ՝ որակապես:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցումով դիմեց Պաշտպանության նախարարությանը՝ տեղեկանալու համար, թե ինչ է քննարկվում ՊՆ համազգեստների փոփոխման վերաբերյալ ֆրանսիական կողմի հետ, եւ ինչ գործընթացներ են իրականացվել:

Պաշտպանության նախարարությունից մեզ պատասխանել են.

«Դեռեւս շարունակվում են գործընկեր երկրների դաշտային համազգեստների ուսումնասիրման աշխատանքները: Ուսումնասիրման արդյունքում ընտրված նմուշի ձեռք բերման նպատակով օրենքով սահմանված ընթացակարգով կհայտարարվի մրցույթ: Մրցույթի արդյունքում կնքված պայմանագրերին կից ժամանակացույցով մատակարարվելիք խմբաքանակներից հնարավոր կլինի հատկացնել ՀՀ ԶՈՒ անձնակազմին»:

Ստացվում է, որ նպատակը կա, սակայն վերջնարդյունքը հեռու ապագայում դեռ հորիզոնում չի երեւում:


Նիկոլ Փաշինյանի եւ ԶՊ-ականների փակ հանդիպումները սերիալներով են տեղի ունենում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այսօր կրկին վարչապետն ու նախարարները գնալու են խորհրդարան՝ իշխանական թեմի պատգամավորների հետ փակ հանդիպման: Սա վերջին օրերին ԶՊ-ականների եւ Նիկոլ Փաշինյանի արդեն երրորդ հանդիպումն է: Իսկ ինչ էն քննարկում իշխանականները ինտենսիվ այս հանդիպումների ժամանակ: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ այս օրերին ԶՊ-ում օրակարգային թեման Եվրամիության անդամության թեկնածու դառնալն է, ու վարչապետի հետ հանդիպումների ժամանակ այս հարցն են քննարկում: Նախօրեին ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանի հետ հանդիպման օրակարգում եւս այս հարցն է եղել: Մեր տեղեկություններով՝ ԵՄ անդամության թեկնածու դառնալու գործընթացի հիմնական կուրատորը հենց ԱԽ քարտուղարն է լինելու: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, Նիկոլ Փաշինյանը մտադիր է շատ արագ ավարտին հասցնել այս հարցը, ուստի չի բացառվում, որ սեղմ ժամկետում Հայաստանը Եվրամիության անդամության թեկնածու դառնալու հայտ ներկայացնի: Իսկ թե այդ հերթում ինչքան կապասի, դժվար է ասել:



Հայաստանյան քաղաքական պլատֆորմում նոր համագործակցություններ են սպասվում դաշինքների ֆորմատով: Այսպիսով, ավագանու անդամի մանդատից զրկվելուց հետո Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը հայտարարեց, որ պատրաստվում է իր սեփական կուսակցությունը հիմնել, որպեսզի մասնակցի ԱԺ հերթական կամ, ըստ զարգացումների, նաեւ արտահերթ ընտրություններին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայկ Մարությանին է պատրաստվում միանալ «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանը: Այսինքն՝ նոր ընտրությունների դեպքում Հայկ Մարությանի եւ Մեսրոպ Առաքելյանի թիմերը մտադիր են հանդես գալ միասնաբար՝ որպես դաշինք: Տեղեկությունը փորձեցինք ճշտել անձամբ Մեսրոպ Առաքելյանից. վերջինս ասաց, որ Հայկ Մարությանի հետ լավ հարաբերություններ ունի, բայց քաղաքական համագործակցության հարց նրա հետ չի քննարկել: Հարցին՝ բացառում է արդյոք համագործակցությունը Մարությանի հետ, Մեսրոպ Առաքելյանն ասաց, որ որեւէ ուժի հետ համագործակցության մասով քննարկում չի եղել:



Ռատավորները մնացել են անպաշտպան, բոլոր կողմերից «կրակում» ու ճնշում են, որի հետեւանքով շատերը, չդիմանալով իրավիճակին, դիմում են գրում, հեռանում: Երեկ, Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, սեփական դիմումի հիման վրա՝ դադարել են Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Կարեն Մարդանյանի եւ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավոր Սերգեյ Մարաբյանի լիազորությունները: Դրանից առաջ Արշակ Վարդանյանը, սեփական դիմումի համաձայն, ավարտեց դատավորի կարիերան: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ հաջորդ դատավորը, որը աշխատանքից ազատման դիմում կգրի սեփական նախաձեռնությամբ եւ կհեռանա դատական համակարգից, Արագածոտնի մարզի դատավոր Անդրանիկ Մնացականյանն է: Ավելին՝ լուրեր կան, որ, բացի ազատումից, նրա նկատմամբ այլ գործընթացներ կսկսվեն: Ինչ է կատարվում դատական համակարգում. ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ուշագրավ գրագրություն է ի հայտ եկել, որտեղ վերոնշյալ դատավորները իրենց խմբում կոնկրետ իշխանության ղեկավար անձանց մասով հայտնաբերված են արել, ու դատավորներից մեկն այդ գրագրությունը հասցրել է քաղաքական իշխանություններին, ինչից հետո էլ հայտնաբերված գրած դատավորներին ստիպում են ազատման դիմումներ գրել սեփական նախաձեռնությամբ ու հեռանալ համակարգից: Ըստ մամուլում տարածված տեղեկությունների՝ գրագրությունը քաղաքական իշխանություններին հասցրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ռուբին Մխիթարյանը, որն իշխանությունների «սրտի» դատավորն է, ու ամեն գնով ցանկանում են նրան տանել ԲԴԽ՝ որպես դատավոր անդամ: Իսկ ինչո՞վ է զբաղված ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը՝ ի դեմս նախագահ Կարեն Անդրեասյանի: ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը Սահմանադրությամբ եւ օրենսգրքով սահմանված լիազորություններն իրականացնելու միջոցով երաշխավորում է դատարանների եւ դատավորների անկախությունը: Սակայն, իրականում Կարեն Անդրեասյանը ոչ թե պաշտպանում է դատավորների անկախությունը, այլ հենց նա է տարբեր ճանապարհով դատավորներին ճնշողներից մեկը:



ԶՐՈՒՅՑ

# «Ո՛Չ ՆԵՐՄՈՒՄ ԸՆԿԵՐՆԵՐ ՈՒՆԵՆ, Ո՛Չ ԵՐԿԻՑ ԳՈՒՐՄ»

**Մարտինի քաղաքում բնակիչները կրկին բողոքի ակցիա են իրականացնում. այս անգամ ոչ թե խողանի հարկերն են դասճառը, այլ կարսոֆիլի բեքի իրացումը:**

ArmLur.am-ը գրուցել է Ազգային ժողովի «Պատիվ ունեն» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանի հետ՝ փորձելով սահմանել՝ ովքեր են թերացել այս խնդրի հարցում:

Պատգամավորի հետ քննարկել ենք կարտոֆիլի բեքի իրացման խնդիրների պատասխանատուների վարքը եւ պատասխանատուների եւ գերատեսչությունների միջև 6 ամիս տեւող բանակցությունների անարդյունավետությունը:

**Տիկին Թովմասյան, որպես Գեղարքունիքի մարզը ներկայացնող պատգամավոր, կիսնորեմ մանրամասնել, թե նման խնդիրները մարզում ինչից են առաջացել, որն է սկզբնաղբյուրը խնդիրների:**

«Ուզում եմ ասել, որ նորություն չէ, որ ՀՀ իշխանությունները կառավարման համակարգի լրջագույն խնդիրներ ունեն եւ տկարություն են ցուցաբերում, ու մարդկանց ցատումը հերթական դրսեւորումներից մեկն է: Կհիշե՞ք՝ մի քանի օր առաջ ես հարցում էի ուղարկել տարածքային կառավարման նախարարին եւ պահանջել էի ինձ հստակ տեղեկություն տալ՝ ինչու չեն կարողանում Գեղարքունիքի մարզի բնակիչները իրացնել տարվա իրենց կարտոֆիլի բեքը: Պատասխան էի ստացել, որ իրենք աշխատում են էկոնոմիկայի նախարարության հետ, Գեղարքունիքի մարզպետարանի հետ, եւ այդ աշխատանքները, ըստ հարցման պատասխանի, սկսվել են հոկտեմբերից, այսինքն՝ հոկտեմբերից մինչեւ մարտ պետական բոլոր կառույցները, որոնք պատասխանատու են, աշխատում են, բայց արդյունք չկա. բա ի՞նչ էք աշխատում այդքան ամիս:»

**«Ի՞նչ մի խնդիր այդպես էլ չի՞ լուծվում:**

«Այո, չի լուծվում կառավարման տկարության պատճառով: Նայեք, Մարտինի քաղաքում, Վարդենիսում եւ, ընդհանրապես, մարզում, նաեւ Ծիրակի մարզում ամենաառատ մշակաբույսը կարտոֆիլն է: Տարիներ առաջ շուկան եղել է հայկականը, Վրաստանը, Ռուսաստանը եւ Արցախը. հիմա Արցախը չկա, Ռուսաստանի հետ հարաբերությունները խայտառակ լարված են, Վրաստանի հետ չգիտեմ ինչ վիճակ է, արդյունքում ունենք այն, որ քաղաքացիների կարտոֆիլը տոնաներով մնացել է իրենց պահեստներում, նեխում է. ամբողջ տարի մարդիկ վարկ են վերցրել, լրջագույն ծախսեր են արել, եւ թվում



եղ՝ բեքի հարցը պիտի ինքնաբերաբար լուծվեր: Եթե ինքնաբերաբար չի լուծվում, պետությունը պիտի միջոցներ ձեռնարկի, պիտի պետությունը պատվիրակի: Ստացվում է, որ գյուղացին ցանում է կարտոֆիլը, հավաքում է, եւ, օրինակ, երեւանյան տուպերմարկետներում թանկ գնե՞րով անհայտ ծագման կարտոֆիլ է վաճառվում: Այսինքն՝ չկա ընդհանրապես կանոնակարգում, եւ չկա որեւէ աջակցություն հայ գյուղացուն: Պատճառը նաեւ այն է, որ Հայաստանում չկա գյուղնախարարություն: Նախկինում կար Գյուղատնտեսության նախարարություն, որ քիչ թե շատ գյուղացիների հարցերով զբաղվում էր, հիմա այդ նախարարությունը տարել ինչ-որ կերպ տեղավորել են Տարածքային կառավարման նախարարության մեջ, ու այդպես էլ պատասխանատու չկա, որ գնաս ասես՝ եղբայր, դու պատասխանատու ես, մարդկանց կարտոֆիլը մնացել է իրենց բակերում. լավ, ի՞նչ էք դուք մտածում, ինչքան պիտի մարդկանց անտե-

սեք. բա Հայաստանի հպարտ քաղաքացիներն են...

**«Դուք նշեցիք, որ խնդիրը դեռ հոկտեմբեր ամսից էր սկսվել, երբ իրացման խնդիր էր դրված: Մինչեւ այսօր կարտոֆիլը դեռ չի իրացվել, նեխում է՝ հասցնելով վնաս նաեւ երկրի տնտեսությանը: Ինչո՞ւ կառավարությունը չի կարողանում այդպես էլ լուծել այս համեմատաբար փոքր խնդիրը, որ ունենք հանրապետությունում:**

«Ես նորից պիտի շեշտեմ կառավարման անկարողությունը. օրինակ՝ ես չեմ պատկերացնում, որ մեր երկրում հիմա կա պաշտոնյա, որ կկառդանա գանգել, օրինակ, որեւէ երկրի իր պաշտոնակցին, խնդրել, որ, գիտե՞ք, մենք այսքան տոնաբերք ունենք, կարո՞ղ էք օգնել իրացնել (ինչպես եղել է ավանդաբար նախկինում): Դա ամոթ բան չէ, նորմալ փոխհարաբերություն է երկրների միջեւ: Այս մարդիկ ո՛չ ներսում ընկերներ ունեն, ո՛չ երկրից դուրս ընկերներ ունեն:

*Զրույցը ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*



## ՀԱՅ-ՄԼՈՎԵՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը մարտի 6-ին ընդունել է Հայաստանում Սլովենիայի Հանրապետության դեսպան Մատեյա Պրեվլիչեկին՝ հավատարմագրերի պատճենի հանձնման կապակցությամբ:

Շնորհավորելով դեսպանին նշանակման առթիվ՝ ԱԳ նախարարի տեղակալը վստահություն է հայտնել, որ նա իր առաքելության ընթացքում կգործադրի առավելագույն ջանքեր՝ երկու երկրների միջև հարաբերությունների հետագա զարգացման ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում գրուցակիցները քննարկել են հայ-սլովենական քաղաքական երկխոսության խորացմանը, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններում համագործակցությանն առնչվող հարցեր: Անդրադարձ է կատարվել ԵՄ-ի հետ Հայաստանի գործընկերության շրջանակներում իրականացվող քայլերին:

Արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը գրուցակցին է ներկայացրել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը եւ Հայաստանի ու Ադրբեյջանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացի վերջին զարգացումները: Ընդգծվել է ԵՄ դիտորդական առաքելության տեղակայման կարեւորությունը Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ նոր ոտնձգությունները զսպելու համատեքստում:

## ՀԵՌԱՆՈՍԱԶՐՈՒՅՑ

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունը հայտարարություն է տարածել՝ մանրամասներ ներկայացնելով նախօրեին տեղի ունեցած Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի և ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հեռախոսազրույցից:

«Արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները քննարկել են երկկողմ եւ տարածաշրջանային օրակարգի արդիական հարցերը, այդ թվում՝ հայ-ադրբեյջանական կարգավորման գործընթացը, ինչպես նաեւ փոխգործակցությունն ընդհանուր ինտեգրացիոն միավորումների շրջանակում», - նշված է գերատեսչության հարդրագրությունում:

Ավելի վաղ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը հայտնել էր, որ ռուսական կողմի նախաձեռնությամբ մարտի 5-ին տեղի է ունեցել հեռախոսազրույց Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի եւ Ռուսաստանի Դաշնության ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի միջև:

ՀՀ ԱԳՆ հարդրագրության համաձայն՝ գրուցակիցները քննարկել են երկկողմ եւ տարածաշրջանային վերաբերող հարցեր:

## «ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»

# ԿԵՄԿՈՒՄԱԿՑԱԿԱՆԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ

**«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հասուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուխյանի հրաժարականը եւ դրան նախորդող իրադարձությունները նոր կրիեր են կուսակից «Լուսավոր Հայաստան»-ում: Ուսագրավ է նաեւ, որ հասուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուխյանը օրերս հրաժարական սվեց, սակայն նրա քիմակիցը՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամ, ԱԺ նախկին դասգամավոր Սրբուհի Գրիգորյանը դեռ շարունակում է դեսպան աղաքաքսում դաշնու գրադեցնել:**

Այսպիսով, այն բանից հետո, երբ 2021թ.-ի ԱԺ արտահերթ ընտրություններ

ի արդյունքում ԼՀԿ-ն չանցավ խորհրդարան, ԼՀԿ անդամ Սրբուհի Գրիգորյանը պաշտոնի անցավ պետական ապարատում. 2022թ.-ի մարտից Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գտնվող միասնական սոցիալական ծառայությունում առանձին գործառնություններ համակարգող խորհրդակցական պաշտոնն է զբաղեցնում:

ArmLur.am-ը երեկ զանգահարեց Սրբուհի Գրիգորյանին՝ պարզելու՝ արդյոք իր կուսակցական ղեկավարի՝ Էդմոն Մարուխյանի հրաժարականից հետո ինքը ես պատրաստվում է հրաժարվել պետական պաշտոնից:

«Ես իմ մասնագիտական աշխատանքն եմ անում. չեմ կարծում, որ կուսակցությու-

նում ընդգրկված լինելու համար կամ կուսակցության անդամը որեւէ պաշտոնից դուրս է եկել, դա պատճառ չէ, որ աշխատանքից ազատվես: Ես հիմա էլ կուսակցության անդամ եմ, բայց ինչ ընդունվել եմ աշխատանքի, կուսակցական ակտիվ գործունեություն չեմ ծավալում», - ասաց նա:

Այլ հարցերի Սրբուհի Գրիգորյանը հրաժարվեց պատասխանել՝ պատճառաբանելով, որ պետական պաշտոնը թույլ չի տալիս. «Քաղաքական հարցազրույց չեմ կարող տալ. ես պայմանագիր ունեմ, որ չեմ կարող հարցազրույցներ տալ՝ առհասարակ կուսակցական եւ քաղաքական հարցերի հետ կապված»:

*Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ*

ԵԼՈՒՅԹ

«ԲԱՌԵՐՈՎ ՄԻՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ ՉԷ»

«ԶՎԱՐՔՆՈՑ»-Ը ՀԱՅԿԱԿԱՆ

«Հայաստանի դիրքորոշումը այն է, որ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում ծառայությունն ամբողջությամբ պետք է իրականացնեն Հայաստանի սահմանապահ զորքերը»,- Լրագրողների հետ ճեպագրույցում ասաց Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը՝ պատասխանելով հարցին, թե արդյոք քննարկվում է ՌԴ սահմանապահներին «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից դուրս բերելու հարցը:

«Հայաստանը այս հարցում հստակ դիրքորոշում ունի եւ այդ հստակ դիրքորոշման մասին Ռուսաստանի Դաշնությանը տեղյակ պահել է պաշտոնական նամակով:

Հայաստանի դիրքորոշումն այն է, որ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում ծառայությունը պետք է իրականացնեն Հայաստանի սահմանապահ զորքերը»,- ասաց Գրիգորյանը:

Հարցին, թե ինչու այդպիսի անհրաժեշտություն առաջացավ, Գրիգորյանը պատասխանեց, որ Հայաստանը անկախության շրջանում տարբեր ուղղություններով կարողություն է ձեռք բերում, եւ այս պահին Հայաստանը ամբողջական կարողություն ունի օդանավակայանում ամբողջությամբ վերահսկողություն իրականացնելու համար:

Ավելի վաղ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը կարծիք էր հայտնել, որ ճիշտ կլինի՝ ռուս սահմանապահները դուրս գան «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից:

Ավելի ուշ ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովն իր հերթին նշել է, որ Ռուսաստանին հայտնի չէ «Զվարթնոց» օդանավակայանից ռուս սահմանապահների դուրսբերման մասին Երեւանի կողմից ընդունված որոշումը:

ՓՈԽՃԱՀԱՎԵՏ Է

Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը վստահություն է հայտնել, որ Ռուսաստանի եւ Հայաստանի հարաբերություններում առկա դժվարությունները կհաղթահարվեն, եւ ընդգծել, որ երկու երկրների միջեւ համագործակցությունը միանգամայն փոխշահավետ է:

Այս մասին տեղեկացնում է ՏԱՍՍ-ը՝ մեջբերելով ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովի խոսքերը՝ «Գիտելիք. առաջինները» ուսումնակրթական մարաթոնում ունեցած ելույթից:

«Ամենամոտ հարեանները կարող են ունենալ մի շրջան, երբ հարաբերությունները կարող են սրված լինել, սակայն դրա համար անհրաժեշտ է քաղաքական կամք, ինչը մենք ունենք մեր կողմից, կառուցողականություն եւ հեռատեսություն, երկու երկրների ղեկավարների քաղաքական հեռատեսությունը. մենք դա եւս ունենք: Ուստի, վստահ եմ, որ այս բոլոր դժվարությունները կանցնեն, Ռուսաստանի եւ Հայաստանի համագործակցությունը միանգամայն փոխշահավետ է», - նշել է Պեսկովը:

Հայաստանի դաշնագրության նախարար Մուրեն Պապիկյանը մասնակցել է ելույթ է ունեցել Վազգեն Սարգսյանի 65-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառմանը:

Իր ելույթում Պապիկյանն ընդգծել է, որ Վազգեն Սարգսյանը Հայաստանի պետականաշինության առանցքային դերակատարներից է:

«Այսօր Վազգեն Սարգսյան պետական, քաղաքական, ռազմական գործիչը կդառնար 65 տարեկան: Ինչպիսին կլինեք վերջին տասնամյակների մեր ընթացքը, եթե չլինեք հոկտեմբերի 27-ի ոճաբործությունը՝ դժվար է ասել, բայց մի բան հաստատ է. Վազգեն Սարգսյանը մեր պետականաշինության առանցքային դերակատարներից էր, նրանցից մեկը, ով քաջություն ունեցավ ստանձնելու սեփական ժողովրդի պատմությունն ուղղորդելու, նրա ճակատագրի համար պատասխանատվություն կրելու եւ առջեւից քայլելու պատրաստակամությունը:

«Ես երջանիկ մարդ եմ, որովհետեւ ինձ պատիվ ընծեղվեց իրականացնել այն երազանքները, որ փայփայում էինք գրողներս, լրագրողներս, բայց դա բախտի բան չէր. ես եմ ընտրել իմ ճանապարհը»,- արանք Վազգեն Սարգսյանի խոսքերն են: Անշուշտ, գրիչը զենքով փոխարինելու որոշումը խորապես գիտակցված էր՝ խավարից բողոքելու փոխարեն խավարում սեփական մոմը վառելու վճռականությամբ»,- ասել է Պապիկյանը:

Նրա խոսքով՝ Վազգեն Սարգսյան պետական գործչի ամենակարեւոր հատկանիշներից մեկը մարդկանց համախմբելու ունակությունն էր, նրա սերը, հանդուրժողականությունը, հավատը յուրայինի հանդեպ, տարբեր խավի, տարիքի, մտավոր ունակությունների եւ մտածելակերպի տեր մարդկանց հայրենաշինության գաղափարի շուրջ համախմբելու տաղանդը, սեփական ժողովրդի հետ պարզ ու անկեղծ խոսելու կարողությունը, իր բառերով ասած՝ անտրամաբանական ատելությունը տրամաբանված սիրո վերածնունդը շանքն ու հավատը մի երկրում, որը բառերով սիրելու երկիր չէ, անհատական սիրո երկիր չէ, այլ համընդհանուր սիրո երկիր է:

«Վազգեն Սարգսյանն ասում էր՝ անկախությունը քննարկվող արժեք չէ, նրա մասին փիլիսոփայելն անգամ անմտություն է: Արժեք անկախ լինել, թեկուզ աղքատ: Սովը, աղքատությունն անցողիկ բաներ են, մայրեն անկախությունն է, ասում էր, որ պարզապես հավատում է Հայաստանի ապագային: Մենք՝ այս պետության պատասխանատուներս, չպետք է թույլ տանք, որ անկախությունը, ազատությունը ժողովրդի համար դառնան սովորական գաղափարներ: Անկախությունը բացարձակ արժեք է՝ ընդգծում էր Վազգեն Սարգսյանը: Այսօր էլ նրա խոսքերն արդիական են, եւ անկախության հավերժականությունն ապահովելու համար յուրա-



բանցյուրս անմնացորդ նվիրումով պետք է անենք մեր գործը եւ այդպիսի ապացուցենք, որ սիրում ենք հայրենիքը եւ պարտավոր ենք ուժեղացնել պետությունը: Առանց հզոր եւ մարտունակ բանակի, չի կարող լինել թե՛ պետություն, թե՛ անկախություն. ահա այս հավատի, այս պատասխանատվության ու վճռականության շաղախով դրվեց բանակաշինության հիմքը: Այս յուրահատուկ շաղախով բանակաշինության գաղափարի շուրջ համախմբվեցին ազատագրական կռիվներով անցած ֆիդայիներն ու կադրային սպաները, գիտնականներն ու գրողները, հասարակ հայ մարդիկ: Ու նաեւ այդ ամուր շաղախի շնորհիվ է, որ մեր բանակը կանգնել է մինչ օրս ու ամենածանր փորձություններից հետո ոտքի կանգնելու, մեջքը շտկելու հաստատուն ծրագրեր է իրականացնում»,- հավելել է ՀՀ պաշտպանության նախարարը:

Մուրեն Պապիկյանը հիշեցրել է Վազգեն Սարգսյանի խոսքն այն մասին, որ երկրի սահմաններն ամրացնում ենք քրտինքով: «Որպես պետական գործիչ՝ նա եկել էր, որ իր գինակցների ու համախոհների հետ առաջնորդեր իր սահմանները քրտինքով պաշտպանելու ժողովրդի հույժ կարեւոր առաքելությունը եւ ասեր. «Ես տվել եմ ամեն ինչ ու ձեռք եմ բերել հպարտություն: Բանակն ազգի ինքնաճանաչման հայելին է, հայության հավաքական կերպարը, նրա պատասխանատվությունը, նրա պատմության վերազնահատումը եւ հայացքն ապագային»: Բանակի դերը պետության ու ժողովրդի կյանքում ավելի լավ չես ձեռակերպի ու ավելի լավ չես հուշի ինքնաճանաչ-

ման հայելու մեջ սեփական արատները տեսնելու եւ այդ արատներից ձերբազատված ապագա կառուցելու խրոհորդը»,- նշել է նա:

Երկրին սպառնացող վտանգները տեսնելու եւ մատը ցավի վրա դնելու Վազգեն Սարգսյանի ունակությունը բացառիկ էր:

«Մենք ընտիր-ընտիր հպատակ ենք, մենք խելոք-խելոք կատարող ենք, մենք հայտնագործություն ենք ուրիշի ձեռքի տակ»,- Վազգեն Սարգսյանի խոսքերը մեջբերել է Պապիկյանը՝ հավելելով, որ Վազգեն Սարգսյանը սա ասել է խորը ցավով ու շատ էր ուզում, որ «մենք մեր երկրի տերը դառնանք, մենք որոշենք մեր ուղին, մեր ընթացքն ու հանգրվանը, որտեղ ուզում ենք հասնել»:

Պապիկյանն ասել է, որ գրողին հատուկ իր զգացմունքային ու հախուռն խառնվածքով հանդերձ՝ Վազգեն Սարգսյանը նրբանկատ պետական գործիչ էր, երբ խոսքը վերաբերում էր երկրի ապագային, ազնիվ էր ու խոհեմ:

«Նա հզոր անհատականություն էր, այդ պատճառով էլ կարող էր հրապարակավ խոստովանել իր սխալները՝ անկեղծորեն ասելով՝ սխալներ եղել են, կեղծիք՝ ոչ»:

Ու փոխադարձ սիրո, վստահության ու հավատի ամենալավ գնահատական Վազգեն Սարգսյանին տվեց ժողովուրդը՝ կոչելով Սպարապետ: Սպարապետը գիտեր՝ ինչպես խանդավառել մարդկանց, ինչպես վարակել հայրենասիրությամբ, նվիրումով ու խիզախությամբ՝ հանուն հայրենիքի, հանուն պետականության: Սպարապետ, վստահ եղիր, որ քո ցանած սերմերը տվել են իրենց ծիլերը»,- եզրփակել է պաշտպանության նախարարը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏՈՒԳԱՆՔԻ ՄԱՏԵՐԻԱԼ

Կարգազանց հեփոստերն այսուհետ կսուզանվեն, եւ իրավադաշնունքն արդեն լրջագույնս դարձվոր կլինեն հետեւի ֆաղափային կարգադաշնությանը:

Ճանապարհային ուստիկանությունը տուգանելու է մասնավորապես փողոցը չնախատեսված հատվածով անցնելու համար 5000 դրամով, իսկ այն քաղաքացիները, որոնք փողոցը հատել են անցու-

մով, սակայն կարմիր լույսի տակ, կտուգանվեն 3000 դրամի չափով: Բացի սա, քաղաքացիները տուգանվելու են նաեւ ամրագոտին չզցելու համար: Բաղաքացիների շրջանում չկա սահմանված կարծրատիպ՝ լավ է այս կարգավորումը, թե վատ, սակայն փաստը մտում է փաստ, որ այս կարգավորումներից են՝ դժգոհողներ կան, եւ՝ սատարողներ: Ստացվում է, որ, այնուամենայնիվ, հեղափոխությունից

5 տարի անց քաղաքացին դարձավ տուգանքի մատերիալ եւ բոլոր հնարավոր տարբերակներով եւ՝ հարկվում է, եւ՝ տուգանվում: Այս ամենի դիմաց Հայաստանում չի բարձրանում միջին աշխատավարձի շեմը, եւ չի ավելացվում աշխատատեղերի քանակը, իսկ քաղաքացիներն անդադար հարկվելու են եւ տուգանվելու:

ԷՄՍԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԱՐՈՒՅՑ

# ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԵՄ

Ավարտվել է ֆրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող երկու անձանց եւ նրանց կողմնակիցների կողմից Երեւան քաղաքի Գավիթ Բեկ փողոցին հարակից սարածում 2023թ. նոյեմբերի 17-ին կատարված միջադեպի առթիվ նախաձեռնված ֆրեական վարույթից անջատված մասի նախաճանաչումը:



ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերով քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի եւ ընտրական հանցագործությունների քննության վարչությունում իրականացված քննչական եւ վարույթային մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել է հիմնավորվել է, որ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի՝ Վ.Ա.-ի նկատմամբ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում քննվող քրեական գործով, դատարանի որոշմամբ, որպես այլընտրանքային խափանման միջոցներ համակցությամբ կիրառվել էր գրավը եւ բացակայելու արգելքը:

Քաղաքի Գավիթ Բեկ փողոցին հարակից տարածքում բռնություն եւ անօրինական այլ գործողություններ են կատարել. փոխադարձ հարվածներ են հասցրել եւ քաջքշել միմյանց: Բացի այդ, պարզվել է, որ Վ.Ա.-ն եւ Ս.Շ.-ն ապօրինի կերպով ձեռք են բերել եւ պահել «տՄ» /Մակարով/ մոդելի ատրճառակ՝ փամփուշտներով՝ նախատեսված «ոՄ», «ԱոԿ», «Եսուկա 442» մոդելի ատրճառակից եւ համապատասխան տրամաչափի ակոսափող այլ զենքերից կրակելու համար, իսկ Վ.Ա.-ն՝ նաեւ առանձնապես խոշոր չափի՝ 1,38 գրամ քաշով «Մերամֆետամին» տեսակի թմրամիջոց, որոնք հայտնաբերվել են վերջինիս անձնական, ինչպես նաեւ ավտոմեքենայում կատարված խուզարկություններով: Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող

անձին՝ Վ.Ա.-ին, մեղադրանք է ներկայացվել, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը: Վերջինիս կողմից ղեկավարվող՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակից Ս.Շ.-ի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը: Հիշյալ մեղադրյալների վերաբերյալ մասն անջատվել է առանձին վարույթ, նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է հսկող դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար: Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող մյուս անձի եւ նրա կողմնակիցների գործողություններին իրավական գնահատական տալու մասով նախաքննությունը շարունակվում է:

ԶՈՐ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՆԵՐ

## ԱՎՏՈՎԹԱՐ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ

Մարտի 6-ին խոշոր ու ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 12:20-ի սահմաններում Վարդենիկ-Զուլաքար ավտոճանապարհի՝ Վարդենիկ գյուղի վարչական տարածքում բախվել են «BMW» եւ «Opel» մակնիշի ավտոմեքենաները:

Ինչպես դեպի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, բախման հետեւանքով 6 հոգի տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Մարտունու բժշկական կենտրոն:

Օպերատիվորեն դեպի վայր է ժամանել ՀՀ Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Մարտունու թիվ 33 հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:

Ժամանել են նաեւ Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի գումարտակի 2-րդ վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Ալբերտ Մարտիրոսյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Իգոր Ղազարյանի, գումարտակի ծառայության ավագ տեսուչ Բակուր Սարիբեկյանի գլխավորությամբ:

Ժամանել են նաեւ ոստիկանության Մարտունու բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Ստեփան Հակոբյանի գլխավորությամբ:

Վթարի մասին ոստիկանության Մարտունու բաժնից տեղեկությունը փոխանցել են Հայաստանի քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժնի, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Մինչ ոստիկաններն ու պարեկները վթարի վայրը սահմանազատել եւ սպասում էին քննչական խմբին, հիվանդանոցից ոստիկանության Մարտունու բաժնի ահազանգ է ստացվել, որ վիրավորներից մեկը գիտակցության չգալով մահացել է:

Վթարի փաստով Մարտունու քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում է վարորդների, մահացածի եւ վիրավորների ինքնությունը:

Գագիկ Շամշյանի տեղեկություններով՝ «Opel»-ի մեջ եղել են 5 հոգի, որոնք ընտանիքի անդամներ են, եւ մահացածը նշված ընտանիքի անդամներից մեկն է:

Քննիչի հանձնարարականով ավտոմեքենաները տեղափոխվել են ոստիկանության Մարտունու բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

# ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

ՀՀ վերահսկիչ ֆրեական դասարանի դասավոր Մրցակ Վարդանյանի անակնկալ հրաժարականից հետո դասական համակարգում հրաժարականները բարունակվում են:



Երեկ, Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, սեփական դիմումի հիման վրա՝ դադարել են Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Կարեն Մարդանյանի եւ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավոր Սերգեյ Մարաբայանի լիազորությունները:

Սյու մասին հայտնում են Բարձրագույն դատական խորհրդից՝ հավելելով, որ դատական օրենսգրքով նախատեսված կարգով՝ Սերգեյ Մարաբայանի լիազորությունները դադարում են նաեւ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնում: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ, մեզ հասած տեղեկությունների համաձայն, դատավոր Արշակ Վարդանյանի անակնկալ հրաժարականը նույնպես նախապատմություն է ունեցել: Դատական համակարգից մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Արշակ Վարդանյանի հրաժարականին դեռ շատ գործընթացներ են հետեւելու, իսկ թե ինչ, դժվար չէ կանխատեսել: Իսկ ի՞նչ է կատարվում դատական համակարգում. ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ուշագրավ գրագրություն է ի հայտ եկել, որտեղ վերոնշյալ դատավորները կոնկրետ անուններ են շոշափել, ու դատավորներից մեկը այդ գրագրությունը հասցրել է քաղաքա-

կան իշխանություններին, ինչից հետո էլ դատավորներին ազատման դիմում են գրում ու հեռանում համակարգից: Իսկ թե դատավորներից ով է դատական համակարգի ներքին խոսակցությունները հասցրել իշխանություններին ու դատավորներին փաստի առաջ կանգնեցրել, կինա՞նք՝ հետեւելով մեր հրապարակումներին: **ՔՆՍՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

● Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 1-ից մարտի 4-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 205 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՅՈՒՂԵՐ՝ ՎԵՐԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Նիկոլ Փաշինյանը կառավարության նիստում հայտարարել է, որ 31 ոչ անկալ հանդիսացող գյուղերի կենսական տարածքները գտնվում են աղբբեռնական օկուպացիայի տակ, սակայն Աղբբեռնը հրաժարվում է ճանաչել օկուպացիայի փաստը: Կառավարության ներկայացրել է վերոհիշյալ 31 բնակավայրերի ցանկը, սակայն այն թերի է: Մանրամասնելը Տավուշի մարզի օրինակով: Կառավարության ներկայացրած 31 գյուղերի թվում Տավուշի մարզից ներկայացված է 9 գյուղ, որոնք Բերդ եւ Իջեան խոշոր համայնքների սահմանամերձ բնակավայրեր են: Նոյեմբերյան խոշոր համայնքի այն գյուղերը, որոնց տարածքները գտնվում են Աղբբեռնի գիւնուծի վերահսկողության ներքո, կառավարության ներկայացրած 31 բնակավայրերի թվում չկան: Մինչդեռ, Նոյեմբերյան խոշոր համայնքի սահմանամերձ Կոթի գյուղի տարածքներից մոտ 1000 հեկտար հողեր շուրջ 30 տարի գտնվում են աղբբեռնական գիւնուծի վերահսկողության տակ կամ փաստացի չեզոք գոտի դարձած հատվածում: Նոյեմբերյան համայնքի Բարեկամական գյուղի վարելահողերի մի զգալի մասը աղբբեռնական գիւնուծի վերահսկողության տակ է: Նմանապես Բերդական, Դովեղի գյուղերից մեծ տարածքներ արդեն երեք տասնամյակ Աղբբեռնի գիւնուծի վերահսկողության ներքո են:

ՄԵՆԱԿՈՒՅԹԸ ՏԱՎՈՒՇՈՒՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի տեղեկատվական հարցում ենք արել՝ հարցնելով, թե 2024 թվականին Տավուշի մարզում պետական ֆինանսավորմամբ մշակութային ինչ միջոցառումներ են նախատեսված: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է, որ ՀՀ պետական բյուջեի միջոցներով ընթացիկ տարում «Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ը կիրականացնի «Պարատոն» միջազգայնաբանական մշակութային փառատոն, Իջեանի «Ավանդույթ» երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը կիրականացնի «Վարդավառ» զանգվածային միջոցառումը, «Կողբի գեղարվեստի դպրոց» ՀԿ-ն կիրականացնի երիտասարդ սկարիչների ցուցահանդես-փառատոն, «Բերդի մշակույթի կենտրոն» ՄՀԿ-ն կկազմակերպի միջամայնքային մշակութային փառատոն: Ինչպես ակնհայտ է նախատեսված մշակութային միջոցառումների ցանկից, այս տարի նախատեսված է պետական ֆինանսավորմամբ մարզի 4 խոշոր համայնքներից յուրաքանչյուրում՝ Նոյեմբերյանում, Իենում, Բերդում, Դիլիջանում կազմակերպել մշակութային մեկական միջաջառում: Տավուշի մարզում պետբյուջեի միջոցներով յուրատեսակ մշակութային համահարթեցում է կատարվելու:

ՈՍԿԱՆ ՍՈՐՈՍՅԱՆ Տավուշ

ՀՀ-ԵՄ

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԱԿԱՐԳ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը Բելգիայի Թագավորությունում հանդիպել է Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, Արժեքների եւ քափանցիկության հարցերով հանձնակատար Վեռա Յուրովայի հետ:



Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ արդարադատության նախարարությունը: Գրիգոր Մինասյանը շնորհակալություն է հայտնել Եվրոպական միության կողմից արդարադատության ոլորտին տրամադրված զգալի աջակցության համար, որն ուղղված է ժողովրդավարության, մարդու իրավունքների երաշխավորման եւ օրենքի գերակայության վրա հիմնված կառուցակարգերի զարգացմանը: Նախարարը նաեւ բարձր է գնահատել Եվրոպական հանձնաժողովի հետ արդյունավետ համագործակցությունը եւ վերջիններիս Հայաստան իրականացրած փաստափայլաբան առաքելության այցը: Գրիգոր Մինասյանն ընդգծել է Հայաստանի հետ համագործակցությունն առավել խորացնելու ԵՄ հանձնառությունը եւ հավելել, որ Գործընկերության նոր օրակարգի ընդունումն արդարադատության ոլորտում առկա սերտ համագործակցության ընդլայնման կարևոր խթան կհանդիսանա: Արդարադատության նախարարը նաեւ անդրադարձ է կատարել ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի արդյունքներով համատեղ հայտարարությանը, որով վերահաստատվել է մարդու իրավունքներին, օրենքի գերակայությանը եւ ժողովրդավարական սկզբունքներին, ատելության խոսքի եւ ապատեղեկատվության դեմ պայքարում ՀՀ-ԵՄ համատեղ հանձնառությունը: Գրիգոր Մինասյանը ներկայացրել է նաեւ դատախազության եւ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի բարեփոխումները, անդրադարձել հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ առաջընթացին ու միջազգային ցուցանիշներում գրանցած հաջողություններին:

Գրիգոր Մինասյանը, անդրադառնալով զանգվածային լրատվության մասին օրենսդրության լրամշակման գործընթացին, մատնանշել է, որ նախագիծն ուղղված է նաեւ ՋԼՄ ինքնակարգավորման համակարգի ներդրմանը՝ Եվրոպական առաջադեմ փորձառությանը համապատասխան: Խոսելով մարդու իրավունքների պաշտպանության բարեփոխումների մասին՝ Գրիգոր Մինասյանը նշել է, որ Կառավարության համապարփակ քաղաքականությունն իրականացվում է նաեւ ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում: Այս համատեքստում անդրադարձ է կատարվել «Իրավահավասարության ապահովման մասին» եւ «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքների նախագծերի մշակման գործընթացին՝ ընդգծելով, որ նախագծերը մշակվել են ներառական ու մասնակցային եղանակով՝ հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավմամբ: Նախարարը գործընկերոջն է ներկայացրել նաեւ միջազգային կոնվենցիոն մեխանիզմներին ՀՀ անդամակցության գործընթացներն ու վերջին զարգացումները:

Վեռա Յուրովայն բարձր է գնահատել մարդու իրավունքների պաշտպանության, դատախազական ու հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի կառավարության եւ մասնավորապես Արդարադատության նախարարության ջանքերը: Նա կարելու է բարեփոխումների նախաձեռնություններն ու դրանց մշակման գործընթացների թափանցիկությունը եւ ներառականությունը: Խոսելով ՋԼՄ ոլորտի կատարելագործման եւ ապատեղեկատվության դեմ պայքարի անհրաժեշտությունից՝ Վեռա Յուրովայն անդրադարձել է Տեսալսողական մեդիայի կարգավորման ուղղված ԵՄ դիրեկտիվին եւ ընտրություններին ընդառաջ ապատեղեկատվության դեմ պայքարի վերաբերյալ անձամբ Հանձնակատարի կողմից իրականացվող քարոզարշին: Այս համատեքստում տիկին Յուրովայն ՀՀ-ին աջակցելու պատրաստակամություն է հայտնել՝ ԵՄ առկա գործիքակազմերի շրջանակներում: Հանդիպման ավարտին կողմերը պայմանավորվել են շարունակել փոխգործակցությունը՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանն ու խրվունքի գերակայության ապահովմանը, Եվրոպական լավագույն չափանիշներին համահունչ ՋԼՄ ոլորտի կատարելագործմանն ու ապատեղեկատվության դեմ պայքարին:

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների դպրոցի Անահիտ Մանասյանը Ստրասբուրգ կասարած աշխատանքային այցի ժամանակներում մարտի 5-ին հանդիպել է Եվրոպայի խորհրդի գլխավոր ֆուրսուզար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ:

մարմինների անարգման, անդամախեղման եւ վատ վերաբերմունքի՝ միջազգային իրավունքով արգելված այլ դեպքերի մասին տեղեկություններ: Նշված տեղեկությունները ներառվել են Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում, որը տեղեկությունների իսկությունն ապացուցող խորհրդապահական հատվածով պաշտպանի կողմից ներկայացվել է մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային կազմակերպություններին եւ դերակատարներին: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, Անահիտ Մանասյանն անդրադարձ է կատարել կանանց իրավունքների պաշտպանությանը, ընտանեկան բռնության կանխարգելմանը, Ստամբուլյան կոնվենցիոն վավերացնելու անհրաժեշտությանը,

կենսաբաշխության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության ծրագրի իրականացման մանրամասներին, այդ թվում՝ Օվիեդոյի կոնվենցիոն Հայաստանի կողմից վավերացնելու հարցին: Պաշտպանը ներկայացրել է խտրականության, անհանդուրժողականության, ատելության խոսքի դեմ պայքարի, հավաքների ազատության իրավունքի եւ միջազգային ոլորտներում իրականացվող աշխատանքները: Հանդիպման ավարտին կողմերը բարձր են գնահատել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պաշտպանի աշխատակազմի եւ Եվրոպայի խորհրդի միջեւ ձեւավորված երկարամյա եւ արդյունավետ համագործակցության մակարդակը եւ նախանշել փոխգործակցությունն ընդլայնելու ուղղությունները:

● Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 37 պատահար. 53 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԱՆՏՈՒԴԱՐՁ

ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Զուլաքար գյուղի բնակիչները փակել են Մարտունի-Վարդենիս ճանապարհահատվածը:

Մարտունու շրջանի բնակիչները դժգոհում են գյուղական արտադրանքի, մասնավորապես՝ կարտոֆիլի ել կաղամբի իրացման խնդիրներից:

«Առջեւում ամառ է, ապրանքը սկսել է փչանալ: Համայնքապետարանից պահանջում ենք ինչ-որ քայլեր ձեռնարկել ապրանքը իրացնելու համար. եթե մի քիչ էլ սենց մնա, սաղ ապրանքը կփչանա, կթափենք», -ասում է Մարտունու բնակիչներից մեկը:

ArmLur.am-ը կապ հաստատեց Զուլաքարի վարչական ղեկավար Հրայր Մարգարյանի հետ իրավիճակի մասին տեղեկություն ստանալու նպատակով. «Մեր համայնքի ղեկավարը մարզպետի հետ դիմել է կառավարության անդամների, այդ հարցով աշխատանքներ են տանում, որ միջերում կազմակերպվի. թե ինչ պատասխան կլինի, դեռ պարզ չէ, սպասում ենք պատասխանի»:

Նրա խոսքով՝ հավաքը մի քանի րոպե է եղել, որից հետո ճանապարհը բացվել է:

«Մարդկանց բացատրել ենք, որ այդ հարցով զբաղվում ենք, նախարարության հետ պայմանավորվել ենք, որ այդ հարցին լուծում տան», -ասաց վարչական ղեկավարը:

ArmLur.am-ը համայնքապետի հետ զրույցից հետո կապ հաստատեց մեկ այլ բնակիչի հետ, ով մասնակցել է հավաքին, որն էլ ասաց. «Ոնց որ մեզ են խաբում, տենց էլ ձեզ են խաբում: Միտինգը 3-4 ժամ է տևել, ինչ րոպե»:

ՀԻՎԱՆԳԱՆՈՑԸ՝ ԱՆԲԱՐԵԿԱՐԳ

ArmLur.am-ը վերջին շրջանում հաճախ է ահազանգեր ստանում Արագածոտնի մարզի Թալին քաղաքի բնակիչներից, որ քաղաքի հիվանդանոցն անբարեկարգ վիճակում է:

Թալինի բնակիչներից մեկը մեզ հետ զրույցում ասաց. «Դեռ հիվանդանոց չմտած՝ արդեն իսկ կարելի է ասել, որ հասկանում ես, թե ինչ վիճակ է լինելու ներսում: Փողոցից երբ մտնում ես հիվանդանոցի բակ, ծմռանը ամբողջովին ցեխ է դրսում, ու ոչ մի հարմարություն չկա, որ հասնես մինչև հիվանդանոցի մուտք»:

Մուտքի դռները ժանգոտված են, հիվանդասենյակի դռները վատ վիճակում են, ինչպես նաև ժանգոտված ու ներկերը թափված են: Սարքավորումներ կործակվել են, հարմարություններ չկան: Պալատներում պատուհանների և ամրացված են տուրքակներ, որ ծմռանը ցուրտ չլինի, ջեռուցումը շատ թույլ է: Պետքարանների մասին խոսք չկա, մի այլ տիպի ահավոր է ներսում, ինչ ասես կա ու ահավոր կեղտոտ»:

Բնակչի խոսքով՝ 2021 թվականից հիվանդանոցում վերանորոգում է իրականացվում, որը մինչև հիմա անավարտ է:

ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել Թալինի համայնքապետարանի հետ. մեզ խոստացան հետադարձ կապ հաստատել, սակայն այդպես էլ մեկնաբանություն չստացանք:

ԷՄՄԱ ՍՄՏԻՐՈՍԱՆ

535 ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅՏ

ԳԵՆԱԼՈՎ ՊԱՐԱՆՔԱՐԿԸ ՄԵԾԱՆՈՒՄ Է

Սահմանաձեռն գյուղական բնակավայրերում բնակարանային առանցքային շրջանակում Միասնական սոցիալական ծառայության կողմից արդեն կա 535 հաստատված հայտ: Նվաճված 288 հայտի դարձառյուծ արդեն իրականացվում է վարկավորման փուլը, եւ շուտով կլինեն Կահազործման հանձնված ճեթ: Հաստատված հայտերն, ըստ մարզերի, բաշխվել են հետևյալ կերպ՝ Արարատի մարզում հաստատվել է 67 Կահազործման հայտ, Գեղարքունիքի մարզում՝ 24, Մյունիքի մարզում՝ 71, Վայոց ձորի մարզում՝ 67, առաջատարը Տավուշի մարզն է, այստեղ հաստատվել է 306 ընթացիկ հայտ: Ծրագրի Կահազործման հանձնարարությունն ունեն հիփոթեկային վարկավորման կառուցել իրենց տունը սահմանաձեռն գյուղական բնակավայրում ղեկավարության աջակցությամբ՝ 16 մլն դրամի Երջանակում:



Մեկնարկային փուլի համեմատ՝ տարեկաբար նկատվում է ծրագրի նկատմամբ բավական հետաքրքրություն: «Արմենպրո»-ի մամուլի սրահում հրավիրված ասուլիսում ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների առանձին գործառնություններ համակարգող խորհրդակցական Գայանե Ղարաբաղյանը նշեց, որ մարզային այցերի ընթացքում քաղաքացիների արձագանքը, նրանցից ստացված զանգերը խոսում են այն մասին, որ գնալով պահանջարկը մեծանում է: Թերեւս, պահանջարկով պայմանավորված՝ կառավարությունը որոշում կայացրեց ծրագրի ժամկետը երկարաձգել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագիրը բարելավելու համար օրերս կատարվել են մի քանի փոփոխություններ եւս:

«Ծրագրի պարտադիր պայման է, որ շահառուներն ունենան գրանցված ամուսնություն: Եթե նախկինում հաշվի էր առնվում միայն Հայաստանի քաղաքացի-

ական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը, ապա նոր փոփոխությամբ հաշվի է առնվում նաեւ օտար երկրում գրանցված ամուսնությունը: Այս դեպքում անհրաժեշտ է ամուսնության վկայականի նուտարական վավերացմամբ թարգմանություն, հյուպատոսական վավերացում», -ասաց Գայանե Ղարաբաղյանը:

Ծրագրից օգտվելու համար անհրաժեշտ է բավարարել երկու պայմանի՝ ունենալ գրանցված ամուսնություն, եւ ամուսիններից առնվազն մեկն ունենա ՀՀ քաղաքացիություն: Վերջիններս կարող են ծրագրից օգտվել, եթե ունեն սեփականության իրավունքով իրենց պատկանող հող կամ կիսակառուց շինություն՝ սահմանաձեռն գյուղական բնակավայրում, շինարարական աշխատանքներ իրականացնելու թույլտվություն, նախագիծ/նախա-

հաշիվ: Ի դեպ, քաղաքաշինության կոմիտեի կայքում կան նախատիպային նախագծեր, եւ քաղաքացիները կարող են օգտվել նաեւ այդ տարբերակից: Գայանե Ղարաբաղյանը հիշեցրեց, որ ծրագրի շահառու դառնալ ցանկացող քաղաքացիները նաեւ պետք է չունենան վատ վարկային պատմություն:

Նախարարության ներկայացուցիչը տեղեկացրեց, որ ծրագրից կարող են օգտվել նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածները, եթե ամուսիններից առնվազն մեկն ունի ՀՀ քաղաքացիություն: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներից արդեն հայտեր ստացվում են:

Մինչ այժմ կատարած վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում ծրագրից օգտվելու համար դիմում են երիտասարդ, ինչպես նաեւ բազմազավակ ընտանիքներ:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԿՆԵՐԳՐՎԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՄՏՈՒԳՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Հայաստանում կներդրվի բարեվարքության պարբերական ստուգման մեխանիզմ դատավորների, դատախազների եւ քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» սահմանադրական օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին եւ կից օրենքների փաթեթը քննարկվել է Ազգային ժողովի պետաիրավական հարցերով մշտական հանձնաժողովի նիստում:

Կառավարությունն առաջարկում է իրականացնել մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են բարեվարքության ստուգման գործող կառուցակարգերի աստիճանական զարգացմանը, ինչպես նաեւ նոր ինստիտուտների ներդրմանը: Նախագծով նախատեսվում է վերանայել բարեվարքության ուսումնասիրության ներ-

կայիս կառուցակարգերը, ներկայացվող տեղեկատվության շրջանակը, ինչպես նաեւ ներդրել 30 նոր կարգավորումներ՝ ուղղված դատավորների, դատախազների եւ քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ընթացիկ ուսումնասիրությունն ապահովելուն: Այսպիսով, դատավորների, դատախազների եւ քննչների համար կնախատեսվեն բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության կառուցակարգեր:

«Մենք չենք ունենալու որեւէ սուբյեկտ դատախազությունում, Քննչական կոմիտեում կամ դատարաններում, որի բարեվարքությունը երբեիցե չի ստուգվել: Սա կարելու ազգային հակակոռուպցիոն էլեմենտներից մեկն է, որը ներդրում ենք օրենսդրության մեջ: Ողջունելի են նաեւ այլ կարգավորումները, մասնավորապես՝ թե ինչ է տեղի ունենում, երբ անձին տրվում է բացասական եզրակացություն, ինչպես է դա հանգեցնում համապատասխան ծառայողական քննությանը, ինչ պարագաներում եւ ինչ չափանիշներից էլ ենթվում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կարող է տալ բացասական եզրակացություն:

Նախագծով ամփոփում ենք դատավորների եւ դատաիրավական մարմինների բարեվարքության այն ողիսականը, որը սկսվել էր դեռեւս 2019 թվականին՝ չբացառելով, որ հետագայում եւս լրացուցիչ փոփոխություններ կարող ենք անել այն նախագծերում, որոնք ավելի կընդգծեն հակակոռուպցիոն ռազմավարությունը», - ընդգծեց ԱԺ պետաիրավական հարցերով հանձնաժողովի նախագահ Վաղիմիր Վարդանյանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Լուիզա Նասլյանս, Երեւանի Մաշտոցի պողոտայից մինչև Ամիրյանով Հանրապետության հրապարակ ճանապարհին կորցել եմ դիպլոմներս սույն թվականի մարտի 3-ին՝ 18:00-ից 19:00-ի ընթացքում:

Բակալավորիս դիպլոմի համարն է՝ AB No 147288:

Մագիստրատուրայիս դիպլոմի համարն է՝ AM No 042063:

Գտնողին խնդրում եմ զանգահարել 098190262 հեռախոսահամարով:

«ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՈՒԻ ԿՎԵՆՆԵՐ

ՄԵՂԱՆԻ ԸՈՒՐՁ ԿՍՏԵԼՈՒ ՄՇԱԿՈՒՅԹ

Մնվելը կյանքի կենսական դաժան է, որը մարդուն բույլ է ապա էներգիա հավաքել և աղբյուր, սակայն դեռ է նկատի առնել, որ սնվելը միայն գործողություն չէ...



Պետք է դրանք ճիշտ կիրառել հանդիպումների, երեկոյանների և հյուրասիրությունների ընթացքում: Ցանկացած վայր ներկայանալիս նախ պետք է չուշանալ կամ պահպանել առավելագույնը 15 րոպե ուշանալու կանոնը:

պետք է բռնել բաժակի պոչից, քանի որ ձեռքի տաքությունից խմիչքը կարող է տաքանալ: Երբ գրույցի ընթացքում գինու բաժակը տղամարդու ձեռքում է, ապա այն պետք է ցածր լինի կնոջ գինու բաժակից:

նում նախաճաշելիս, ճաշելիս կամ ընթրելիս պատվիրեք այնքան սնունդ, որքան կարող եք սպառել: սնունդը սեղանին թողնելն ու դուրս գալը ճիշտ չէ...

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒԹՈՒՄ

«Բիսնես» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ)...

վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի-ԵՄ» ՍՊԸ-ի դրամարկովում աճուրդի կայացման հասցեում...

նազորությունը կամ առավանգանքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՂԹԱՆԱԿՈՎ ՄԵԿՆԱՐԿԵՑ

Հայաստանը ներկայացնող բնօրգամարտիկները շարունակում են ելույթները օլիմպիական վարկանիշային մրցաշարում: 71 կգ քաշային Գուրգեն Մադոյանը հաղթանակով մեկնարկեց Իտալիայում ընթացող օլիմպիական վարկանիշային մրցաշարում: Հայ բնօրգամարտիկը գերազանցեց մոլորվացի Վասիլի Տեբոտարիին:

ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԱՌՕՐՅԱ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայում կայացան 1/8 եզրափակիչի պատասխան հանդիպումները: Ֆրանսիական ՊՍԺ-ն, արտագնա խաղում մրցելով «Ռեալ Սոսյեդադ»-ի հետ, առավելության հասավ Կիլիան Մբապեի դուբլի շնորհիվ...

ՊԱՏՎԻՐԱԿ ԵՆ ԵՐԵՎԱՆԻ

ՈՒԵՖԱ-ում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ներկայացնող պատվիրակների թիվն ավելացել է եւս մեկով: Այս մասին գրում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: ՈՒԵՖԱ Եվրոպա լիգայի 1/8 եզրափակիչ փուլի մարտի 7-ին Չեխիայի մայրաքաղաք Պրահայի «Լետնա» մարզադաշտում կայանալիք «Սպարտա Պրահա»-«Լիվերպոլ» հանդիպման ՈՒԵՖԱ-ի մեդիա պատվիրակ (UEFA Venue Media Manager) է նշանակվել ՀՀ Կապիտալայն ընկերության հետ կապերի եւ լրատվության բաժնի պետ, ՀՀ մամուլի քարտուղար Հայկ Կարապետյանը:

●Մարտի 26-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Սամվել Երվինյան. 50 տարի ջութակի հետ» համերգը: Տոմսերի արժեքը՝ 3000-20000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:30-ին:



**ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՐՑ.** Հաճանդամ երեխային կամ 1-ին խմբի հաճանդամին խնամելու ժամանակաշրջանը հաճավա՞վում է աշխատանքային ստա՞ծում: Եվ կցանկանայի նաև տեղեկանալ՝ երեխային խնամելու ժամանակահատվածը ինչչո՞ք է հաճավա՞վում աշխատանքային ստա՞ծում:

Երանուհի Հակոբյան (32 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.**

Ե. Հակոբյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ աշխատանքային ստաժի առկայության դեպքում հաշմանդամ երեխայի խնամակալության ժամանակաշրջանը մինչև երեխայի 18 տարին լրանալը կամ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվում է ծնողի, որդեգրողի, խնամակալի աշխատանքային ստաժում, եթե նա ունի խնամարկյալի հաշմանդամության ժամանակահատվածը հաստատող տեղեկանք, իսկ խնամակալի դեպքում՝ նաև խնամակալ ճանաչված լինելու եւ խնամակալության ժամանակահատվածի մասին տեղեկանքներ, սակայն տասը տարուց ոչ ավելի՝ մինչև կենսաթոշակ նշանակելը ընկած ժամանակահատվածում:

Սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաև ծնողներից մեկի՝ մինչև յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի: Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի աշխատանքային ստաժ՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

**Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն**

**«ԺՈՂՎՈՒՐԳ».**

Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչև 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

**ԿՎՐԳ**

**ՀԱՐՑ.** Հետաքրքիր է իմանալ՝ եթե ՀԿ-ն ֆիզիկական անձին կրթաթոշակ է սպիս, արդյո՞ք եկամտային հարկի դարձվորություն առաջանում է, թե ոչ: Մանվել Սիրադեղյան (52 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.**

Հայտնում ենք, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի համաձայն՝ նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգետր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված կրթաթոշակները, ինչպես նաև այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակվում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

**ՀՀ պետական եկամուտների կոմիտե**

**«ԺՈՂՎՈՒՐԳ».**

Այսինքն՝ ՀԿ-ի կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

**ԼՈՒՐ ԿԱԴՐ**

Լուսանկարը՝ համացանցից



Ռ-ում տղամարդը 5-րդ հարկում գտնվող բնակարան ծի է բերել՝ կնոջը Մարտի 8-ի առթիվ շնորհավորելու համար:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Մեր թերթը  
Բաժանորդագրվելու  
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ  
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ  
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ  
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**

**հայկական տպագիր մամուլից**


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_  
Ազգանուն՝ \_\_\_\_\_  
Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

**ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**



Շիրակ	-9 - 12 +4 + 9	Արարատ	-4 - 7 +11 + 13
Կոտայքի լեռներ	-8 - 12 +5 + 8	Արմավիր	-4 - 8 +10 + 13
Կոտայքի նախալեռներ	-5 - 8 +8 + 10	Վայոց ձորի լեռներ	-3 - 7 +3 + 6
Գեղարքունիք	-8 - 13 +3 + 6	Վայոց ձորի նախալեռներ	-3 - 7 +10 + 12
Լոռի	-6 - 10 +8 + 10	Սյունիքի հովիտներ	-4 - 7 +11 + 14
Տավուշ	-4 - 7 +8 + 11	Սյունիքի նախալեռներ	-9 - 13 +7 + 10
Արագածոտնի լեռներ	-8 - 12 +3 + 6	ԼՂՀ	-9 - 10 +7 + 9
Արագածոտնի նախալեռներ	-5 - 7 +8 + 11	Երեւան	1 - 3 +8 + 10

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23  
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086  
տրված է 24.11.2010  
Ստորագրված է տպագրության 6.3.2024

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում  
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: